

Յունիսի 24-ին Մայր Աթոռ եկաւ Շնորհ. Պօղոս սար-  
կաւադ Զուբարեանը, որ ուսանում է Ս. Պետրովուրդի կայ-  
սերական համալսարանի՝ իրաւաբանական բաժնում։ Նա  
կը ին կվերադառնայ իւր ուսումը շարունակելու համար։

—

Ամսոյս 26-ին, ս. Սահակ և ս. Մեսրովը թարգմանիչ-  
ների տօնին 0շ սկանի եկեղեցում, որտեղ գտնուում է ս.  
Մեսրովի շիրիմը հանդիսաւոր պատարագ մասուցուեց։ 0շա-  
կան էին գնացել Գեր. Վեռնդ և Յուսիկ եպիսկոպոսները,  
բարձր. Յուսիկ և Մամբրէ վարդապետները և Շնորհ. սար-  
կաւադները։ Պատարագիչն էր Բարեց. Մեսրովը արեգան. եր-  
գում էին ձեմարանի աշակերտները։ Պատարագից յետոյ  
հոգեհանդիստ կատարուեցաւ զանազան կողմերից ուխտաւոր  
ժողովրդի ներկայութեան ս. Մոսրովի յիշատակին։



## ՃԵՄԱՐԱՆ Մ. ԱԹՈՒՐՈՅ


—

Ճեմարանում քննութիւնները սկսուեցան տողիլի 14-ին  
և վերջացան մայիսի 31-ին։ Զրդ դասարանում և Գրդ լսա-  
րանում կատարուեցան բոլոր առարկաներից հրապարակական  
քննութիւններ։ Իսկ ա. և բ. լսարաններում և դպրոցական  
միւս դասարաններում միայն առարտած առարկաներից ու-  
ղեղուններից, այլ և այն առարկաներից, որոնցից մանկավար-  
ժական ժողովը անհրաժեշտ համարեց քննութիւն անել։

Դպրոցական բաժինն առարտեցին 19 հոգի, որոնցից 14-ը  
կշարունակեն իրենց ուսումը մասնադիտական բաժնում։ Իսկ  
մասնագիտական բաժինն առարտեցին 13 հոգի, նախապետ  
ներկայացնելով իրենց առարտական շարադրութիւնները։ Դո-  
քա են՝

1. Ադամեան Յարութիւն Թոփուեցի (Նոր-Նախիջևանի ՀՀ- Հակայքից) — Հայոց յարաբերութիւնը լսաբինաց հետ:
  2. Ահարոնեան Անտօն Կաղզուանցի — Հայոց յարաբերութիւնը Յունաց հետ:
  3. Ահարոնեան Հմայեակ Շուշեցի — Ասի կաթուղիկոսութեան պատմութիւնը:
  4. Բալգոշեան Վարդան Վանեցի — Թովման Մէծոփեցու ղբարոցը:
  5. Խանպատեան Աղեքսանդր Խլի-Ղարաբիլիսեցի — Հայոց եկեղեցին ԽI-րդ դարում:
  6. Հայրապետեան Աւագ Բայրախտարցի — Գրիգոր Ակայասէր և Հակաթոռ կաթուղիկոսներ:
  7. Մանուկեան Սարդիս Քղեցի — Աւնիթոռները Հայաստանում:
  8. Մելքոնեան Մկրտիչ Վանեցի — Եսայի Նշեցու դպրոցը:
  9. Արւանձտեան Հրանտ Կարբուցի — Անանիա Մոկացի և իւր ժամանակը:
  10. Տ. Գրիգորեան Գալուստ Վանեցի — XVIII-րդ դարու էջմիածնի պատմութիւնը:
  11. Տ. Յակովեան Յակով Աղացի — Աթոռի փոխադրութիւնը իսպանական էջմիածնի:
  12. Տ. Յակովեան Սևակերիմ Գիւմբէշանեցի — XVI դարու էջմիածնի պատմութիւնը:
  13. Քաջբերունի Առւրեն Բաղիշեցի — Կ. Պոլսի պատրիարքութեան պատմութիւնը:
- Յունիսի 7 ին աւարտող սաների խնդրանօք Վեհափառ Հայրապետի, Մ. Աթոռի միարանութեան, Ճեմարանի ուսուցչական խմբի և ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեան հոգեհանդիսատ կատարուեցաւ Ճեմարանի մաժ Հիմնադրեն շիրմի կրայ և աւարտողներից Արտանձտեան Հրանտի դիմաց իւր ընկերների կարդաց վերջին հրամեշի ճառը: Հոգեհանդսաեան կարգից յետոյ աւարտողները Ճեմարանի Տեսի օգնական՝ Տ. Յուսիկ վարդապետի առաջնորդութեամբ տարուեցան Վեհափառ, Նորին Արքութեան Վեհափառ Հայ-

բազեաի օրհնութիւնը սաանալու: Ծերունազարդ Հայրապետութիւնը իւր Հայրական օրհնութիւնը բաշխելուց և իմաստաւից Խրատները խօսելուց յետոյ իւր ձեռքով աւարտական մըց սնաղբերը բաժանեց:



### ՎԱՆՔԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Երկաթուղին Երևանեան նահանգը միացրել է և մօտեցրել Ռուսաստանին և Եւրոպական կենդրոններին: Հայկական բարձրաւանդակը այցելող, Էջմիածինը, Արարատպատմական սրբազան լեռառը տեսնել ցանկացողները ընդունիչութիւն աղատուել են փոստի, զանազան հանրակառքերի պատճառած դժուարութիւններից, գիշերները անմաքուր փոստային կայարաններում քննելու պատժից, այժմ այցելուն գիշերը Թիֆլիզում նստում է վագոն և մեծ հանգը պատութեամբ, ծախսելով մօտաւորապէս այնքան, որքան առաջ միայն կառապաններին էր նուէր տրւում, կէս օրին կամ երեկոյեան հասնում էջմիածին, Երևան, աւելի շուտ Աղէքսանդրապօլ և Կարս: Ճանապարհի գիւրութիւնը, ինչպէս արդէն սպատում էր, սկսել է ճանապարհորդների մեծ հոսանք բերել մեզ մօտ և օր չի անցնում որ վանքը նորանոր այցելուներ և ուխտաւորներ չունենայ: Այդպիսի յաճախ կրկնուող այցելութիւնները ունենալու են իրենց մեծ օգուտները: Ճանօթանալ միմեանց և ճանաչել իրերի դրութիւնը և այդ պէտք է որ առաջ բերի աւելի ուղղի հայեացք՝ մեր երկրի և յատկապէս էջմիածնի վանքի վերաբերմամբ:

Բացառապէս հազորդակցութեան գիւրութեան շնորհիւն էր, որ ոչ թէ գործով, այլ յատուկ այցելութեան նպատակաւ Յունիս և Յուլիս ամիսներում մեզ մօտ հիւրեկան՝ Պր. Ն. Մառը իւր ընտանիքով, Պր., Գ. Խալաթթեանը, Պ. Լէօն և Պր. Մեյէն: Պր. Մառը, ինչպէս գրել ենք իւր ժամանակին, ամառս պիտի անցկացնի Կովկա-